ճանապարհին, յաճախ, խօսքերը ենթարկւում են խոր էւօլիւցիայի և մի բովանդակութիւնից մի բոլորովին այլ բովանդակութիւն ընդգրկում: Այդ խօսքերից է մալօրօս ժողովրդի մօտ նաև «красный» (կարմիր) խօսքը. մի ժամանակ նաև մալօրօսը, երբ ուզում էր մէկին կարմիր անուանել, այդ ածականն էր գործածում, բայց վաղուց է, ինչ Ուկրայինայում «дурак» (յիմար) ասելու փոխարէն «красный» են ասում (ընդհանուր ծիծաղ): Ես այսօր չգիտեմ, թէ կարմիր ասելով ինչ պիտի հասկանալ, հաստատապէս գիտեմ միայն այն, որ այդ խօսքի տակ դաշնակցական կոմունիստ չի թագնւած:

Մի քանի խօսք կուզէի ասել, մանաւորապէս էսէրներին: Ո՞րն է ձեր կարծիքներից ճշմարիտը, պարոնայք էսէրներ. այն, որ դուք արտայայտում էք դրսո՞ւմ, թէ՞ այն, որ մենք լսում ենք այստեղ: Ամենայարդելի սոցիալիստ յեղափոխականը, որի նկարը կախւած է ձեր ֆրակցիայի սենեակում, Դաշնակցութեան մոլի հակառակորդ Լ. Աթաբէկեանը ձեր իսկ տպագրւած վկայութեամբ ասել է. «որքան էլ ժխտական լինի մեր վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը, որքան էլ որ մեծ լինեն նրա մեղքերը հայ ժողովրդի առաջ, այնուամենայնիւ մենք չենք կարող չխոստովանել, որ նա ընդունակութիւն ունի ականջ դնելու հայ ժողովրդի զանգւածների զարկերակին, իսկ հայ ժողովրդական զարկերակը զերազանցապէս յեղափոխական է: Եւ երբ ինքը Դաշնակցութիւնը կամենայ լինել ռէակցիօն՝ յետադիմական, հայ աշխատաւորական մասսաները կը խանգարեն դրան»: Աթաբէկեանը յայտնում և յայտարարում էր, որ Դաշնակցութիւնը Մուսաւաթ չէ, իսկ դուք այսօր խուժանավարօրէն այլ բան էք ասում:

Դուք այժմ ինչ որ ակնարկներ էք անում «հայ թրքական» մեթոդների մասին, բայց ինչո՞ւ աւելի անկեղծ չլինել և աւելի պարզ չխօսել: Անչուշտ, դուք նկատի ունէք հայ թրքական ընդհարումները, բայց չէ՞ որ դեռ մօտ 14 տարի առաջ ձեր իսկ կուսակցութեան կովկասեան ճիւղի ազդարարութեամբ այդ ընդհարումների մէջ Դաշնակցութիւնը բնաւ չէիք մեղադրում: Վերջապէս, ե՞րբ պիտի դադարէք երեք էսէրներդ երեք կարծիք ունենալուց:

Եւ ի՞նչ են ձեր այդ ճառերը, պարոնայք էսէրներ, իշխանութե՞ան էք ձգտում՝ խնդրեմ, դէմ չենք, բայց ով էլ ուզում է թող նստի այս օթեակում, միայն թէ օթեակում նստելուց առաջ նախ և առաջ ժողովրդի մէջ պէտք է նստի: Մտէք ժողովրդի մէջ և ժողովրդի միջից նոր միայն բարձրացէք դէպի իշխանութիւնը (բուռն ծափեր):

Բախտորոշ դէպքեր են կատարւում և մեր միակուռ, միակամ պայքարն է, որ պիտի դիմագրաւէ և փրկի մեր փոթորկւած նաւը: Մեր կառավարութեանը ասելու մի խօսք ունենք միայն — ձեզ հետ է մարտնչող հայութիւնը. եղէ՛ք աւելի ամրակուռ, աւելի համոզւած, որովհետև այլ գիծ, քան դուք էք ընտրել, չկայ (երկարատև աղմկալից ծափեր):

Ց. Բուդաղեանը դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է հետևեալ բանաձևը. «Լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը Ադրբէջանի կառավարութեան նստայի և նրան տւած պատասխանի մասին՝ խորհրդարանը հաւանութիւն է տալիս կառավարութեան ընթացքին ու միաժամանակ հրահանգում է նրան ձեռք առնել բոլոր միջոցները փրկելու հայ ժողովրդի գոյութիւնն ու ազատութիւնը»:

Բանաձևն ընդունւում է 33 ձայնով: Նիստը փակւում է գիշերւայ ժամը 12–ին: